Հիմնավորում

Մասիս քաղաքային համայնքի ավագանու 24.12.2020թվականի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 171-Ն որոշմանը կից թիվ 1, 2, 3 և 4 հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին որոշման ընդունման

1. **Մասիս քաղաքային համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2021 թվականի համայնքի բյուջեում փոփոխությունները պայմանավորված է 2021 թվականի բյուջեն հաստատելուց հետո եկամտային և ծախսային մասերում առաջացած մի շարք խնդիրներով, ինչպես նաև նոր ծրագրերի իրականացման համար բյուջեի համապատասխան ծրագրերում ֆինանսական միջոցներ նախատեսելու անհրաժեշտությամբ:

2. **Առկա խնդիրների նկարագրությունը**

2021 թվականի հունվարից Հայաստանի Հանրապետության ,,Անշարժ գույքի մասին'' օրենքում կատարվել է շենք-շինությունների և հողի հարկի հարկատեսակի և դրույքաչափերի փոփոխություն, որի արդյունքում էապես նվազել է անշարժ գույքի հարկի բազային ելակետային ցուցանիշը: 2021թվականի բյուջեում հողի հարկի և գույքահարկի պլանային ցուցանիշ է սահմանվել 64635,0 հազար դրամ, սակայն օրենքի փոփոխության արդյունքում ելակետային բազային ցուցանիշը 2021թվականին հարկվող անշարժ գույքի համար կազմում է 37451,5 հազար դրամ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընթացիկ տարում ավելացել է փոխադրամիջոցներից գույքահարկի բազային ցուցանիշները, բյուջեում եկամուտների և ծախսերի հավասարակշռվածությունն ապահովելու նպատակով եկամտային մասում փոխադրամիջոցներից գույքահարկը ավելացնել 27183,5 հազար դրամի չափով , անշարժ գույքի հարկը սահմանել 37451,5 հազար դրամ:

2021 թվականի ընթացքում մի շարք անհատ ձեռնարկատերեր դադարեցրել են իրենց գործունեությունը, որի արդյունքում 406,75 հազար դրամով նվազել են տեղական տուրքերից ակնկալվող եկամուտները: Մասնավորապես նվազել են ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվության համար եկամուտները 68,0հազար դրամով, վիճակախաղերի 24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար եկամուտները՝ 150,0 հազար դրամով, տաքսի ծառայության թույլտվության համար եկամուտները՝ 20,0 հազար դրամով, այլ արտաքին գովազդի համար եկամուտները՝ 168,75 հազար դրամով:

Մասիսի համայնքապետարանի վարչական շենքի 3-րդ և 4-րդ հարկերի հիմնանորոգման աշխատանքների հետ կապված 3-րդ հարկի վարձակալները փոխադարձ համաձայնությամբ չեն օգտագործում պայմանագրով իրենց զբաղեցրած տարածքները: Համայնքի ավագանու 10/06/2021թ. թիվ 64-Ա որոշմամբ վարչական շենքի 3-րդ հարկի վարձակալներին սահմանվել է արտոնություն՝ վարձակալներն ազատվել են վարձավճարից 2021 թվականի մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածի համար, որի ընդհանուր գումարը կազմում է 563 990 դրամ: Հաշվի առնելով նշված հանգամանքը անհրաժեշտ է բյուջեում նախատեսված այլ գույքի վարձակալությունից գանձվող վճարները նվազեցնել 563 990 դրամով:

Քաղաքապետարանի վարչական շենքի հիմնանորոգումից հետո 3-րդ և 4-րդ հարկերի պատուհանների համար անհրաժեշտ է ձեռք բերել շերտավարագույրներ, որի ձեռք բերման համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 952 000 դրամ:

Քաղաքում առկա տեսադիտման սարքերի հաճախակի խափանումների հետևանքով սպառվել է բյուջեում ընթացիկ նորոգման համար նախատեսված գումարները: Տեսադիտման սարքերի առկա խափանումները վերացնելու և հետագա անխափան աշխատանքը ապահովելու նպատակով անհրաժեշտ է բյուջեում լրացուցիչ գումար նախատեսել 228 000 դրամի չափով:

Եկամուտների և ինֆորմացիայի բաժնի աղբահանության վճարների գանձման աշխատանքները իրականացնող պայմանագրային աշխատողները գերազանցել են 2021 թվականի 8 ամսվա համար նախատեսված ցուցանիշները՝ այն կատարելով 105%-ով: Առաջարկվում է աղբահանության վճարների գանձման աշխատանքների կատարման լավ ցուցանիշների համար նրանց բյուջեից հատկացնել պարգևավճար ընդհանուր 306 000 դրամի չափով:

''Արմեն Նազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց'' ՀՈԱԿ-ի տնօրենի կողմից առաջարկվել է մարզադպրոցում բացել բռնցքամարտի մարզաձևի խումբ՝ հաշվի առնելով Մասիս քաղաքի երեխաների հետաքրքրությունը մարզաձևի նկատմամբ: 2021 թվականի սեպտեմբերի 1-ից մարզադպրոցում 1 դրույք բռնցքամարտի խումբ ստեղծելու և պահպանելու համար մինչև դեկտեմբեր ամիսը անհրաժեշտ է մարզադպրոցին հատկացնել լրացուցիչ սուբսիդիա 373 200 դրամ:

2021 թվականի համայնքի բյուջեում նախատեսված է 4500 000 դրամ Մասիս քաղաքի օրվա առթիվ միջոցառում անցկացնելու համար, սակայն քննարկելով արցախյան պատերազմից հետո միջոցառում անցկացնելու աննպատակահարմարությունը և հաշվի առնելով ներկա պահին համայնքում արցախյան պատերազմում վիրավորվածների և զոհվածների ընտանիքների սոցիալական վիճակը՝ առաջարկվում է համայնքի բյուջեի

''Մշակութային այլ միջոցառումներ'' գործառական դասակարգմամբ ''Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ'' հոդվածով նախատեսված 4 500 000 դրամը տեղափոխել ''Սոցիալական հատուկ արտոնություններ'' գործառական դասակարգման ''Այլ նպաստներ'' հոդված՝ վերոնշյալ ընտանիքներին սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով:

2021 թվականի բյուջեի վարչական մասում եկամուտների և ծախսերի փոփոխությունների արդյունքում բյուջեի հաշվեկշռվածությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը նվազեցնել 2829 940 դրամով:

Մասիսի քաղաքապետարանի վարչական շենքում Մասիսի քաղաքացիների սպասարկման գրասենյակ ստեղծելու նպատակով Գերմանական միջազգային համագործակցության ընկերության /GIZ/ հետ 26/07/2021 թվականին կնքվել է պայմանագիր օտարերկրյա կազմակերպությունների կողմից դրամաշնորհի ծրագրի շրջանակներում Մասիսի քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների համար, որի արժեքը կազմում է 12 962 780 դրամ: Գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաթեթը տրամադրվել է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության /GIZ/ կողմից:

2021 թվականի ընթացքում ձեռք է բերվել նախագծա-նախահաշվային փաթեթներ, որոնց աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է բյուջեի ֆոնդային մասում նախատեսել միջոցներ:

Մասիս քաղաքի ն/թ 1-ին շենքի և դիմացի այգու միջանկյալ հատվածի, 1-ին շենքի հարակից Հայփոստի և սրճարանի միջև գտնվող անցումային հատվածի սալիկապատման աշխատանքների համար անհրաժեշտ է հատկացնել 3 921 160 դրամ:

Մասիս քաղաքի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի սան հանգույցների հիմնանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ է հատկացնել 6 851 600 դրամ:

Վերոնշյալ կապիտալ ծախսերի իրականացման համար անհրաժեշտ է ''Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ'' գործառական դասակարգման ''Վարչական սարքավորումներ'' հոդվածը նվազեցնել 10 772 760 դրամով, այն ուղղելով կապիտալ աշխատանքներին:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացումների և նվազեցումների մասին

Բյուջեի վարչական մաս

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառական դասակարգում, նպատակ	հոդված	Ծախսեր / հազար դրամ/	Եկամուտներ /հազար դրամ/
				Հարկային եկամուտներ			
1				Գույքահարկ իրավաբանական անձանցից			-13064.10
2				Գույքահարկ ֆիզիկական անձանցից			-20516.00
3				հողի հարկ գյուղ նշանակության հողերից			-6257.40
4				հողի հարկ ոչ գյուղ նշանակության հողերից			-24797.50
5				Անշարժ գույքի հարկ			37451.50
6				գույքահարկ փոխադրամիջոցների համար			27183.50
				Տեղական տուրքեր			
7				ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար			-68.00
8				Վիճակախաղերի 24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար			-150.00
9				տաքսի ծառայության թույլտվության համար			-20.00
10				այլ արտաքին գովազդի համար			-168.75
11				Այլ գույքի վարձակալությունից մուտքեր			-563.99
12	11	1	2	Պահուստային ֆոնդ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը նվազեցնել	4891	-2829.94	
13	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ. քաղաքապետարանի 3-րդ և 4-րդ հարկերի շերտավարագույրների ձեռք բերման համար ,,Գրասենյակային նյութեր'' հոդվածն ավելացնել	4261	952.00	
14	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ. Տեսադիտման սարքերի կարգաբերման ծառայությունների համար ''Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ'' հոդվածն ավելացնել	4239	228.00	

15	05	1	1	Աղբահանություն. Աղբահանության վճարների գանձման աշխատակիցների խրախուսման նպատակով ,,Պարգևատրում'' հոդվածն ավելացնել	4112	306.00	
16	09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն. ''Արմեն Նազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց'' ՀՈԱԿ-ում 1 դրույք բռնցքամարտի խումբ բացելու համար լրացուցիչ սուբսիդիա հատկացնել 2021 թ. սեպտեմբերից-դեկտեմբեր ամիսների համար	4511	373.20	
17	08	2	4	Մշակութային այլ կազմակերպություններ. Մասիս Քաղաքի օրվան նվիրված միջոցառման համար ''ընդհանուր բնույթի այլ ծառայություններ'' հոդվածով նախատեսված ծախսերը նվազեցնել	4239	-4500.00	
18	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ. Արցախյան պատերազմում զոհվածների և վիրավորվածների ընտանիքներին դրամական աջակցություն ցույց տալու նպատակով ,,Այլ նպաստներ,, հոդվածն ավելացնել	4729	4500.00	
				Ընդամենը		-970.74	-970.74

2021 թվականի բյուջեի վարչական մասի եկամուտների և ծախսերի փոփոխությունների արդյունքում բյուջեի եկամուտները և ծախսերը կնվազեն 970 740 դրամով:

Բյուջեի ֆոնդային մաս

հ/հ	**բաժին**	**խումբ**	**դաս**	**Գործառական դասակարգում, նպատակ**	**հոդված**	**Ծախսեր /հազար դրամ/**	**Մուտքեր /հազար դրամ/**
1				դրամաշնորհ օտարերկրյա կազմակերպությունների կողմից /Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն GIZ/			12962.78

2	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ. Մասիսի քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ	5113	12962.78	
3	06	1	1	Բնակարանային շինարարություն. Մասիս քաղաքի ն/թ 1-ին շենքի և դիմացի այգու միջանկյալ հատվածի, 1-ին շենքի հարակից Հայփոստի և սրճարանի միջև գտնվող անցումային հատվածի սալիկապատման աշխատանքներ	5113	3921.16	
4	09	1	1	Նախադպրոցական կրթություն. ''Մասիս քաղաքի Թիվ 5 մանկապարտեզ'' ՀՈԱԿ-ի սան հանգույցների հիմնանորոգման աշխատանքներ	5113	6851.60	
5	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ. ''Վարչական սարքավորումներ'' հոդվածը նվազեցնել	5122	-10772.76	
				Ընդամենը		**12962,78**	**12962,78**

2021 թվականի բյուջեի ֆոնդային մասի եկամուտների ավելացման և ծախսերի վերաբաշխման արդյունքում ընդհանուր եկամուտները և ծախսերը կավելանան 12 962 780 դրամով:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ն. ՍԱՀԱԿՅԱՆ